ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 275-Ա

ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-002-0067-0021 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.13832 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ՍԱՐԻԲԵԿ ՀՐԱՆՏԻ ՄՈՍԻՆՅԱՆԻ, ՍՎԵՏԼԱՆԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄՈՍԻՆՅԱՆԻ ԵՎ ՍՊԱՐՏԱԿ ՍԱՐԻԲԵԿԻ ՄՈՍԻՆՅԱՆԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՌԱՆԸ ԵՎ ԾԱԾԿԸ ՆՇԱԳԾՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 51-54-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 135-րդ և 202-րդ, 188-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման, և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Սարիբեկ Հրանտի Մոսինյանի դիմումը, անձնագրերի պատճեները, 09.01.2025թ. Սանահին թաղամասի վարչական ներկայացուցչի կողմից տրամադրված 01.12.1993թ. 20/9 որոշումից քաղվածքը փոստային հասցեի և կառուցման տարեթվի մասին տեղեկանքները, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, մասնագիտական եզրակացությունը՝ ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի վարչական տարածքում գտնվող, կադաստրային քարտեզի 06-002-0067-0021 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.13832 հա մակերեսով հողամասի նկատմամբ ֆիզիկական անձանց՝ Սարիբեկ Հրանտի Մոսինյանի (ծնված՝ 07.05.1966թ.), Սվետլանա Սերյոժայի Մոսինյանի (ծնված՝ 13.06.1965թ.) և Սպարտակ Սարիբեկի Մոսինյանի (ծնված՝ 29.05.1992թ.) պատկանող հողհատկացման հիմքերը, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

2. Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի վարչական տարածքում գտնվող, Սարիբեկ Հրանտի Մոսինյանին (ծնված՝ 07.05.1966թ.), Սվետլանա Սերյոժայի Մոսինյանին (ծնված՝ 13.06.1965թ.), Սպարտակ Սարիբեկի Մոսինյանին (ծնված՝ 29.05.1992թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, կադաստրային 06-002-0067-0021 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.13832 հա մակերեսով հողամասում, 2019թ. և 2013 թ. ինքնակամ կառուցված կադաստրի կոմիտեում 2023B3DHE5 ծածկագրով հաշվառված, 53.1 քմ արտաքին մակերեսով (55.3 ներքին մակերեսով) մառանը և ծածկը ենթակա է գրանցման նշագծված տարբերակով, որպես ինքնակամ կառույց:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի կադաստրային քարտեզի 06-002-0067-0021 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և հողամասում առկա գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզ, Ալավերդի համայնք, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամասի, 2-րդ փողոց, 54 փոստային հասցե:

4. Ինքնակամ կառուցված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության գոտիներում և կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

6. Սույն որոշման առաջին կետով սահմանված անշարժ գույքի սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և այն հանդիսանում է սույն որոշման բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

7. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Հ. ՁԱՎԱՐՅԱՆ

2025թ. փետրվարի 07
ք. Ալավերդի